Թեմատիկ թեստային աշխատանք

Գրականություն

VIII դասարան

Ա/Ա _____

1. Ի՞նչ տիտղոս է ստացել Գրիգոր Զոհրապը.

Պատասխան՝ _____

2. Ո՞ր գրական հայերենով է ստեղծագործել Գրիգոր Զոհրապը:

Պատասխան՝ _____

3. Ի՞նչ է նշանակում այրի՝ _____

4. Օրվա ո՞ր ժամն է նկարագրված «Սիրերգ» բանաստեղծությունում:

Պատասխան՝ _____

5. Քանի՞ տնից է կազմված բանաստեղծությունը՝ _____

6. Ինչպե՞ս է սկսվում առաջին տողը:

Պատասխան՝ _____

7. Ժողովածուներից ո՞րը չի պատկանում Մեծարենցին՝ «Ծիածան», «Ցեղին սիրտը», «Նոր տաղեր»:

Պատասխան՝ _____

8. Ե՞րբ է մահացել Դանիել Վարուժանը և ի՞նչ պատճառով:

Պատասխան՝ _____

9. Ո՞ր ժողովածուում է ընդգրկված «Զոն» բանաստեղծությունը:

Պատասխան՝ _____

10. «Զոն»-ը արձա՞կ, թե՞ չափածո ստեղծագործություն է.

Պատասխան՝ _____

11. Ընդգծե՛լ արևմտահայ գրողների անունները:

Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Դանիել Վարուժան, Հովհաննես Թումանյան, Նար-Դոս, Պարույր Սևակ, Գրիգոր Զոհրապ:

12. Համապատասխանեցնել ստեղծագործությունը գրողի անվան հետ:

1) Գրիգոր Զոհրապ ա) «Ձոն»

2) Միսաք Մեծարենց բ) «Այրին»

3) Դանիել Վարուժան գ) «Ձմրան պարզ գիշեր»

1	
2	
3	

13. Տեղադրել բաց թողած բառը:

Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր,
Ընդ եղեգան փող _____ ելաներ:

14. Տեղադրել բաց թողած բառերը:

Հովե՛ր կանցնին
Ու ցորյանին _____ ծփուն
Մերթ կը պատռին, մերթ կը կարվին _____:

15. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Վահան Տերյանը՝ _____

16. Ո՞րն է Տերյանի առաջին գիրքը:

ա. «Մթնշաղի անուրջներ» բ. «Գիշեր և հուշեր» գ. «Երկիր Նաիրի»

17. Ո՞ր բանաստեղծությամբ է բացվում Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն:

Պատասխան՝ _____

18. Ո՞ր բառն է բաց թողած:

Իմ խաղաղ երեկոն է հիմա
_____ և տխուր և անուշ,
Քեզ երբեք սիրտս չի մոռանա,
Իմ մաքո՛ւր, առաջին, իմ անուրջ...
(վերջալույս, մեղմալույս, իրիկնալույս)

19. Ո՞ր շարքում է ընդգրկված «Մի՛խառնեք մեզ ձեր վայրի...» բանաստեղծությունը՝

Պատասխան՝ _____

20. Բաբելոնը և Ասորիքը մեզ համար բարեկա՞մ, թե՞ թշնամի տերություններ են եղել:

Պատասխան՝ _____

____/____/____

_____ *միավոր*

Ուսուցչուհի՝ _____ *Ն. Զեյնալյան*